ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Մեթոդական հնարների սնդուկ»՝ ծնողական ժողովը արդյունավետ և հետաքրքիր անցկացնելու համար

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Մուրադյան

Նոր Արտամետի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3
Գլուխ 1. Ծնողական ժողովի մոտիվացիոն փուլ……4
1.1 Փոխաբերական քարտեր կամ Մետաֆորիկ ասոցիատիվ քարտերի օգտագործում……4
1.2 Ինչպե՞ս երեխային նախապատրաստել դպրոցին……7
1.3 Հարցաթերթիկների դերը ծնողական ժողովների ընթացքում……9
Գլուխ 2. Առաջին ծնողական ժողովը՝ առաջին դասարանում……10
2.1 Հրահանգներ ծնողներին……12
2.2.Ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները…13
2.3 Ի՞նչ պետք է ունենա առաջին դասարանցին……14
2.4 Հաջողված ծնողական ժողովի անցկացման հնարքներ……15
Եզրակացություն……17
Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծնողական ժողովները դպրոցի և ծնողների համագործակցության գլխավոր ձևերից են: Ծնողական ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացին մասնակցող երկու կողմերը՝ մանկավարժներն ու ծնողները, որպեսզի լսեն միմյանց և քննարկեն երեխաներին վերաբերող հիմնական խնդիրները:

Երեխաների հետ աշխատանքում լավագույն արդյունքների հասնելու համար պետք է նախ ճանաչել նրան: Իսկ երեխային լավ ճանաչելու համար պետք է բարձր մակարդակի վրա գտնվի ուսուցիչ- ծնող- աշակերտ կապը…

Այն ամենը, ինչ մեր կյանքում տեղի է ունենում առաջին անգամ, միշտ երկար ժամանակ մնում է մեր հիշողության մեջ:

Այ, օրինակ,ես շատ հստակ հիշում եմ իմ ելույթը առաջին ծնողական ժողովում: Ընդհանուր վիճակը՝ ուշագնացության եզրին. ծնկների դող, բերանում չորություն: Անընդհատ նայում ես հուշող թերթիկին, կարծես նրա օգնությամբ փորձելով թաքնվել ծնողներից և մոլուցքային վախ, որ հիմա կսկսեն հարցեր տալ…

Երևի յուրաքանչյուր երիտասարդ, սկսնակ ուսուցիչ ունեցել է այս զգացողությունները:

Իսկ եթե վերլուծենք ծնողների հետ այս առաջին փոխհամագործակցության մեթոդներն ու տեխնիկան,ապա սա ոչ այլ ինչ է, քան սովորական դասախոսություն, տեղեկության հաղորդում:

Անցել են տարիներ, որոշակի փորձ ձեռք բերելուց հետո ես սկսեցի հասկանալ, թե որքան անարդյունավետ է սովորական դասախոսության տեղեկատվական մեթոդը ծնողական ժողովում: Ես սկսեցի անհանգստանալ, թե արդյո՞ք ծնողական ժողովների ժամանակ լսում են ինձ ծնողները, արդյոք հավատում են այն ամենին, ինչ ես ասում եմ, որքան ժամանակ են հիշվում առաջարկությունները…

Ուսումնասիրելով բազմաթիվ տեսական և գործնական գրականություն այս ոլորտում, ծանոթանալով հոգեբանների և մանկավարժների առկա զարգացումներին, եկա այն եզրահանգմանը, որ ունկնդիրների յուրաքանչյուր լսարան անհատական է, և

այն, ինչ հարմար է ոմանց, կարող է ընդհանրապես օգտակար չլինել մյուսների հետ աշխատելիս:

Այս հոդվածում ներկայացնելու եմ որոշակի մեթոդներ, որոնք թույլ կտան բարձրացնել ծնողական ժողովի անցկացման արդյունավետությունը՝

- ստեղծելով ուսուցչի և ծնողների միջև բաց շփման իրավիճակ, որն իր հերթին հանգեցնում է ծնողների և ուսուցչի միջև լարվածության նվազմանը
- ծնողների ներգրավվումը բարձրացված հարցերի ակտիվ քննարկմանը
- հնարավորություն ընձեռելով ծնողներին կիսվել սեփական փորձով:

  Նկարագրված մեթոդները թույլ կտան նրանց՝ պասիվ ունկնդիրներից վերածվել տեղի ունեցողի ակտիվ մասնակիցների:

ԳԼՈՒԽ 1. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՓՈՒԼ

Փոխաբերական քարտեր

կամ Մետաֆորիկ ասոցիատիվ քարտերի օգտագործում

«Սպունգ»

Ծնողական ժողովի սկզբում անհրաժեշտ է ծնողներին դրդել ակտիվորեն մասնակցել բարձրացված հարցերի քննարկմանը: Դրա համար ուսուցիչը կարող է օգտագործել փոխաբերական քարտեր կամ մետաֆորիկ ասոցիատիվ քարտեր:

Փոխաբերական քարտերը ստեղծվել են դեռ անցյալ դարի 80-ականներին, սակայն մեզ մոտ հոգեբանները սկսեցին լայնորեն կիրառել դրանք միայն վերջին մի քանի տարիներին:

Փոխաբերական քարտը պրոֆեսիոնալ հոգեբանական գործիք է, որը հիմնված է տեսողական փոխաբերության հետ աշխատելու վրա:

Մեր ներսում կան բազմաթիվ տեսողական պատկերներ,որոնցից շատերը պահվում են մեր հիշողության մեջ մեր ողջ կյանքի ընթացքում, ինչպես թանգարանային նմուշները:

Դրանցից մի քանիսին հաճախ ենք անդրադառնում, ոմանց գոյության մասին մոռանում ենք: Բայց երբ նրանք հանդիպում են նմանատիպ արտաքին պատկերների, նրանք հանկարծակի կենդանանում են ՝ առաջացնելով տարբեր զգացումներ ՝ զարմանքից ու հրճվանքից մինչև տխրություն ու ուրախություն:

Այս պատկերներով հանդիպումը հանդիպում է ինքն իր հետ, ոչ միշտ հեշտ ու հաճելի, բայգ միշտ հուզիչ: Երբ մարդը նայում է իրեն հոգեբանի առաջարկած բացիկին, նա, փաստորեն, շրջում է իր ներքին թանգարանի բազմաթիվ դռներով,

որոնց հետևում ապրում են իրադարձություններ, տպավորություններ, մարդկային պատմություն…

Փոխաբերական քարտերը այս դռների բանալիներն են: Փակ սենյակների պարունակությունը, որը դուրս է հանվել լույսի ներքո, իմաստ է ստանում և լցվում համապատասխան բովանդակությամբ: Ընտրելով այս կամ այն քարտը և ուսումնասիրելով այն՝ մարդ իրականում խոսում է իր մասին: Եվ այս պատմությունից, և՛ հոգեբանին, և՛ իր համար պարզ է դառնում, թե որտեղի՞ց է նա ուժ վերցնում, ի՞նչ արժեհամակարգ ունի, ինչի՞ց է վախենում և ինչի՞ն է հավատում:

Ահա մետաֆորիկ ասոցիատիվ քարտերի օգտագործման մեկ օրինակ, որի մասին ներկայացնում է մանկավարժ - հոգեբան Ս.Ցվետկովան « Школьный психолог» թերթի

«Воспитание в картинках» իր հոդվածում:

Մետաֆորիկ նկար «Սպունգ» (քննարկվող թեմա՝ «Երեխայի դաստիարակությունը»):

Հենց սկզբից ծնողներին պետք է փորձել ակտիվացնել նախապես պատրաստված ուղիղ հարցերի օգնությամբ,քանի որ, շատ հաճախ, ծնողները փորձում են խուսափել որևէ ակտիվությունից (օր.՝ արտահայտել սեփական կարծիքը, մեկնաբանել, հարց ձևակերպել, ցույց տալ սեփական գիտելիքները թեմայի վերաբերյալ), չցանկանալով ոչ կոմպետենտ երևալ, վախենալով սխալվելուց և այլն…

Ստորև ներկայացված են ուսուցչի հարցերը և ծնողների մոտավոր պատասխանները:

-Ի՞նչ է պատկերված նկարում:

- Սպունգ(ծնողները):

-Եկեք փորձենք թվարկել այս առարկային բնորոշ հատկանիշներ: Ի՞նչն է բնորոշ նրան:

-Այն շատ լավ կլանում է հեղուկը (ծնողներ):

-Եկեք պատկերացնենք,թե ի՞նչ կլինի, եթե սպունգի վրա կապույտ հեղուկ լցնենք: Ինչպե՞ս դա կազդի նրա վրա:

-Սպունգը կդառնա կապույտ (ծնողներ):

-Իսկ եթե սպունգը ներծծի կարմիր հեղուկ:

-Սպունգը կկարմրի (ծնողներ):

-Իսկ եթե սպունգի վրա միաժամանակ լցնենք տարբեր գույնի հեղուկներ:

-Սպունգը կստանա անորոշ, անհասկանալի գույն (ծնողներ):

-Քննարկման սկզբում մենք պարզեցինք,որ սպունգին բնորոշ հատկանիշը ներծծելու կարողությունն է: Լավ, իսկ ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում դաստիարակություն:

Ծնողները բարձրաձայնում են իրենց կարծիքները:

-Դաստիարակություն նշանակում է դաստիարակելը, դաստիարակվելը, անձի վրա կատարվող նպատակասլաց և սիստեմատիկ ներգործության պրոցես, որի նպատակը նրա աշխարհայացքի, բարոյական սկզբունքների ու վարքագծի, բնավորության ու կամքի, սովորությունների, ճաշակի և անձնային այլ գծերի ու հատկությունների ձևավորումն է:

Փոքր երեխան սպունգի նման է, կլանում է այն ամենը, ինչ ծնողները լցնում են նրա մեջ: Դուք կարող եք երկար ժամանակ համոզել երեխային, որ ծխելը վնասակար է, պատժել նրան վատ սովորության համար: Սակայն, սա անիմաստ է, եթե նա տեսնում է, թե ինչպես է իր հայրը կամ մայրը, կամ ավագ եղբայրը, կամ իր շրջապատի մեծերը ի՞նչ հաճույքով են ծխում: Նա ամենայն հավանականությամբ, կընդօրինակի իր շրջապատի մեծերի օրինակը:

-Իսկ հիմա, եկեք փորձենք նշել երեխայի դաստիարակության ամենակարևոր սկզբունքներից մեկը:

Արտահայտվում են ծնողները:

-Իհարկե, դաստիարակության սկզբունքներից մեկը դա սեփական օրինակով դաստիարակելու սկզբունքն է:

«Կարապը, խեցգետինը և գայլաձուկը»

Խոսելով երեխաների դաստիարակության մեթոդների մասին, ես կցանկանայի, որ այսօր ինքներդ որոշեք, թե ո՞րն է դաստիարակության կարևորագույն սկզբունքներից հերթականը: Դա անելու համար նայեք առաջարկվող պատկերներին և համեմատեք դրանք:

Ի՞նչ է տեղի ունենում յուրաքանչյուր նկարում:

-Առաջին նկարում պատկերված է Ս.Կոիլովի «Կարապը, խեցգետինը և գայլաձուկը» առակի սյուժեն, որտեղ յուրաքանչյուրը սայլը քաշում է իր կողմը: Նրանցից յուրաքանչյուրը ջանում է ինչքան ուժ ունի, բայց սայլը տեղից չի շարժվում:

Երկրորդ նկարում պատկերված է ձիերի եռյակ, որոնք լծված են մեկ սայլի: Ձիերի եռյակը սլանում է մեկ ուղղությամբ ՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները: (ծնողներ):

- Ո՞ր երկու տեսակի ընտանիքների հետ կարող ենք համեմատել այս երկու նկարը:

Ծնողներն ասում են իրենց կարծիքները:

-Առաջին նկարը հիշեցնում է մի ընտանիք, որտեղ յուրաքանչյուրը երեխային դաստիարակում է՝ ելնելով իր սեփական սկզբունքներից և ցանկություններից: Նմանատատիպ իրավիճակներում ընտանիքի բոլոր անդամները հաճախ երեխային ներկայացնում են հակասական պահանջներ, ինչպես նաև ցուցաբերում են անհամապատասխանություն իրենց պահանջներում. այսօր մի բան են պահանջում, վաղը մեկ այլ բան և այլն:

Նման ընտանիքներում երեխան սովորում է մանիպուլյացիայի ենթարկել ընտանիքի անդամներին, դառնում է նյարդային:

Երկրորդ նկարը հիշեցնում է ընտանիք, որը դաստիարակության գործընթացում միասնական է, ներդաշնակ շարժվում է դեպի մեկ նպատակ՝այն է՝ երեխայի ներդաշնակ զարգացում: Այս ընտանիքում պահպանվում է դաստիարակաության հիմնական սկցբունքներից մեկը՝ այն է, երեխային ներկայացվող պահանջներում լինել հետևողական: Նմանատիպ ընտանիքներում երեխան իրեն հարմարավետ և պաշտպանված է զգում՝ չանհանգստանալով մանրուքների համար, քանի որ գիտի, որ ծնողները միշտ գիտեն իրենց անելիքը:

«Ուսապարկ»

Թեման ՝ Ինչպե՞ս երեխային նախապատրաստել դպրոցին

Հուշող տեքստ.

-Ի՞նչ է պատկերված նկարում:

-Ուսապարկ:(ծնողներ)

-Ինչի՞ համար է պետք ուսապարկը մարդուն:

-Էքսկուրսիա ,արշավի գնալու համար:(ծնողներ)

-Ի՞նչ եք սովորաբար դնում ուսապարկի մեջ,երբ գնում եք արշավի:

-Տարբեր իրեր:Այն ամենը ,ինչ կարող է անհրաժեշտ լինել արշավի ժամանակ:(ծնողներ)

-Համաձայն եք,որ ինչ դնենք մեր ուսապարկի մեջ,դրանից կարող է կախված լինել մեր արշավի հաջող ընթացքը,իսկ որոշ դեպքերում ,ինչու չէ, նաև մեր կյանքը կարող է կախված լինել այդ իրերից:

-Այո:(ծնողներ)

-Յուրաքանչյուր մարդ,ուսապարկը հավաքելիս,անհատական մոտեցում է ցուցաբերում:Մեկը կդնի միայն այն ամենը,ինչ անհրաժեշտ է,և այն իսկապես անհրաժեշտ կլինի արշավի ժամանակ:Մյուսը թեթև կտանի ուսապարկի հավաքումը՝ հույսը դնելով պատահականության վրա:Երրորդը կծանրաբեռնի իր ուսապարկը,և ծանր բեռը միայն կխանգարի նրան արշավի ժամանակ:

-Ձեզանից ոմանց մոտ, միգուցե, հարց կառաջանա, թե ինչու՞ ենք մենք քննարկում ուսապարկի հավաքման գործընթացը: (Ծնողները բարձրաձայնում են իրենց կարծիքները):

Ուսապարկը մեր դեպքում երեխա է,իսկ արշավը՝ երեխայի ապագա դպրոցը:

Կարծում եմ բոլորդ կհամաձայնեք, որ ինչպես որ երեխային նախապատրաստում ենք դպրոցին, որքան լուրջ ենք մոտենում այս գործընթացին, այնքան դրանից է կախված նրա հետագա կյանքը դպրոցում: Եթե մենք լուրջ չվերաբերվենք ուսապարկի հավաքելու գործընթացին, այսինքն՝ երեխային ուսմանը նախապատրաստելուն, ինչ- որ բան բաց կթողնենք կամ ընդհանրապես չենք նախապատրաստի, ապա դպրոցական կյանքում դժվարություններ հաստատ կլինեն: Օրինակ՝ երեխայի տարրական գիտելիքների բացակայությունը իրեն շրջապատող աշխարհի մասին, հիշողության, ուշադրության ,երևակայության անբավարար

զարգացումը, բացասաբար կանդրադառնա նոր գիտելիքների յուրացման գործընթացի վրա, ինչի արդյունքում կտուժի երեխայի առաջադիմությունը:

Հակառակ իրավիճակ,երբ ծնողները փորձում են երեխային նախապատրաստել դպրոցին,ինչքան հնարավոր է նրան տալով ամեն տեսակի գիտելիքներ և հմտություններ,նույնպես ցանկալի չէ: Այս դեպքում նրա նյարդային համակարգը գերծանրաբեռնված է, նա դառնում է նյարդային, բացի այդ,նա կորցնում է հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ: Ինչու| սովորել, եթե արդեն իսկ գրել և կարդալ գիտի:

Մեկ այլ հնարավոր տարբերակներից է ծնողների հետ քննարկել հին կամ ժամանակակից առակներ,որոնք ուսուցչի կողմից ընտրվում են ծնողական ժողովին համապատասխան:

Այսպես, օրինակ, եթե քննարկում ենք երեխայի նկատմամբ կոպիտ, ոչ մանկավարժական վերաբերմունքի հետևանքների հարցը, կարելի է քննարկել հետևյալ առակը՝

«Առակ մեխերի մասին»

Կար- չկար մի շատ բռնկուն և անզուսպ երիտասարդ: Եվ ահա մի անգամ հայրը նրան տվեց մեխերով պարկ և որպես պատիժ հրամայեց յուրաքանչյուր անգամ, երբ նա չկարողանա վերահսկել իր բարկությունը, մի մեխ խփել ցանկապատի սյունին:

Առաջին օրը սյան վրա մի քանի մեխ հայտնվեցին: Հաջորդ շաբաթվա ընթացքում նա կամաց կամաց սկսեց սովորել զսպել իր բարկությունը և օրեցօր հասկացավ, որ ավելի հեշտ է վերահսկել իր խառնվածքը, քան մեխեր խփելը:

Վերջապես եկավ օրը, երբ նա ոչ մի անգամ չկորցրեց ինքնատիրապետումը: Նա պատմեց այդ մասին իր հորը:

Հայրն ասաց.

-Հիմա, յուրաքանչյուր օր, երբ կկարողանաս վերահսկել քեզ, կարող ես սյունից մեկական մեխ հանել:

Անցնում էր ժամանակը, և եկավ այն օրը, երբ տղան կարող էր հորն ասել, որ սյան վրա ոչ մի մեխ չի մնացել: Այդ ժամանակ հայրը բռնեց նրա ձեռքը և տարավ ցանկապատի մոտ.

-Դու կարող ես հաղթահարել քո առջև դրված խնդիրը,բայց նայիր ,ինչքան անցք կա սյան վրա: Սյունը այլևս չի լինի այնպիսին, ինչպիսին առաջ էր: Երբ մարդուն մի բան ես ասում, նրա մոտ մնում է ճիշտ այդպիսի մի սպի, ինչպիսին այս անցքերն են: Եվ կարևոր չէ, թե քանի անգամ ես դու ներողություն խնդրում, միևնույն է, սպին մնում է:

Ոչ պակաս արդյունավետ է առակների վրա հիմնված անիմացիոն ֆիլմերի դիտումը, որին հաջորդում են քննարկումները:

Ագռավն ու սիրամարգը

https://youtu.be/O0XlmNR167k

Հարցաթերթիկների դերը ծնողական ժողովների ընթացքում

Ծնողների հետ այս կամ այն խնդրի մասին խոսելիս ցանկալի է ,որպեսզի ծնողները կարողանան գոնե նախնական պատկերացում ունենալ `արդյո՞ք իրենց երեխան ունի նկարագրված դժվարությունները: Օր. ` երեխաների ագրեսիվություն, անհանգստություն, հոգեբանական պատրաստվածություն դպրոցին և այլն:

Ի վերջո, ոչ բոլոր ծնողներն են քննադատաբար վերաբերվում իրենց և իրենց երեխային, միշտ չէ, որ կարողանում են տեսնել ընտանիքում առկա խնդիրները՝ երեխայի հետ հարաբերություններ կառուցելու գործընթացում:

Որոշ ծնողներ կարող են պարզապես չունենալ հատուկ գիտելիքներ ` իրավիճակը օբյեկտիվորեն գնահատելու համար: Ինչի կապակցությամբ ծնողական ժողովներում ի հայտ է գալիս հարցաթերթիկներ օգտագործելու անհրաժեշտություն: Ակնհայտ է, որ նման հարցաթերթիկները չեն կարող խորը վերլուծություն տալ առկա խնդիրներին, սակայն, այն հնարավորություն է տալիս առաջին ընդհանուր գնահատական տալ ներկա իրավիճակին: Առաջադրվող հարցաթերթիկները պետք է լինեն պարզ ` ծնողների համար ընկալելի և մատչելի:

Այդպիսի հարցաթերթիկներ կարող են լինել «Ագրեսիվության նշաններ երեխայի մոտ», «Իմպուլսիվ վարքի նշաններ», «Արդյո՞ք պատրաստ է երեխան դպրոցին», «Դաստիարակության մեթոդները ընտանիքում»:

Որպեսզի ծնողները անկեղծ լինեն իրենց պատասխաններում, նախքան հարցում անցկացնելը, անհրաժեշտ է նշել, որ հարցման ընթացքում ստացված տվյալները հայտնի կլինեն միայն իրենց և կարիք չկա դրանք բարձրաձայնել ամբողջ լսարանին: Հարցման արդյունքները ի մի բերելով և կոնկրետ տեղեկատվություն ստանալով իրենց և իրենց երեխայի մասին, ծնողները հաճույքով կլսեն ուսուցչի խոսքը և մեծ ուշադրություն կդարձնեն նրա առաջարկություններին:

ԳԼՈՒԽ 2 ԱՌԱՋԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Թեման՝ Երեխան գնում է դպրոց՝ «Առաջին անգամ՝ առաջին դասարան»

Նպատակը՝

- ծանոթացում առաջին ուսուցչուհու և միմյանց հետ
- ծնողներին ծանոթացնել դպրոցի պահանջներին՝ուսումնական գործընթացում
- աջակցել երեխայի ընտանիքին,որպեսզի նախապատրաստեն իրենց երեխային՝դպրոցի առաջին դասարանում ադապտացվելու գործընթացին
- անցկացնել հարցում՝երեխային և նրա ընտանիքին ավելի մոտիկից ճանաչելու համար (հարցաթերթիկ)
- սահմանել նպատակներ՝ առաջին կիսամյակի համար
- ընտրել դասարանի ծնողկոմիտեի նախագահ և անդամներ

Ընթացքը

-Բարև ձեզ ,հարգելի՛ ծնողներ:

Ես շատ ուրախ եմ ,որ տեսնում եմ բոլորիդ այս դասարանում և ողջունում եմ ձեզ՝ մեր առաջին դասարանի առաջին հանդիպմանը: Ես հասկանում եմ, թե որքան հուզիչ է այս պահը ձեզ համար: Սրտանց շնորհավորում եմ ձեզ այս իրադարձության կապակցությամբ: Ինձ համար նույնպես հուզիչ իրադարձություն է, քանի որ ամեն անգամ ես անհանգստանում եմ, թե ինչպիսի՞ն կլինեն իմ ապագա աշակերտները: Բայց ավելի մեծ անհանգստությամբ և հուզմունքով սպասում եմ ձեզ հետ հանդիպմանը, հարգելի՛ ծնողներ: Ինչպիսի՞ն եք դուք: Արդյո՞ք կհավանենք իրար, կգտնենք փոխըմբռնում: Կարո՞ղ եք, արդյոք, լսել, հասկանալ և ընդունել իմ պահանջները, դառնալ մեր փոքրիկ առաջին դասարանցիների գլխավոր օգնականը, իսկ ինձ համար դառնալ համախոհ ընկեր և գործընկեր: Սրանից է կախված ձեզ հետ մեր համատեղ աշխատանքի հաջողությունը:

Եկեք ծանոթանանք («Սառույց» կոտրող վարժանք). մեզանից յուրաքանչյուրն իր անվան սկզբնատառով ասում է 1 հատկանիշ, 1 վայր (տեղանուն), 1 կենդանի կամ բույս, 1 գործողություն: Օր.՝ Մտածկոտ Մերին Մալդիվներում մոլորված մոծակին մեռցրեց:

Հուսով եմ, որ դուք բարի եք և ուշադիր, արձագանքող և հասկացող, ինչպես իմ նախորդ սաների ծնողները, որոնց հետ մենք չորս տարի ապրել ենք խաղաղ, վստահության և փոխըմբռնման մթնոլորտում: Եվ, եթե եղել են տարաձայնություններ, ապա դրանք իրենց լուծումն են գտել մեր դասարանի ներսում՝ լսելով միմյանց, բացառելով բոլոր տեսակի կոնֆլիկտները:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դասարանի ավարտելուց հետո, երբ ծնողների հետ երկար տարիներ լավ ծանոթներ և նույնիսկ ընկերներ ենք մնում, ինքնավստահությունն աճում է. ինձ մոտ ամեն ինչ պետք է ստացվի նաև ձե՛զ հետ:

Շնորհավորում եմ բոլորիդ՝ ձեր և ձեր երեխայի կյանքում տեղի ունեցած մեծ իրադարձության կապակցությամբ, ձեր փոքրիկի կյանքում նոր փուլ սկսվելու և ձեր նոր դերի կապակցությամբ: Հիմա դուք ոչ միայն ծնողներ եք, այլև առաջին դասարանցու ծնողներ եք, ինչն էլ ավելի դժվար է ու պատասխանատու, հուզիչ, բայց նաև ուրախացնող, քանի որ ձեր երեխաները մեծացել են: Միանգամայն հասկանալի է նաև ձեր հուզմունքը. եկել է ձեր երեխայի գրել - կարդալ սովորելու ժամանակը: Եվ դուք ցանկանում եք իմանալ, թե ո՞վ է լինելու ձեր որդու կամ դստեր ուսուցիչը. ու՞մ վստահել երեխայի կյանքի ամենակարևոր փուլերից մեկը:

Հաճելի է տեսնել ծնողների, որոնց ես արդեն ճանաչում եմ: Հաճելի է, որ նրանք ինձ են վստահել նաև իրենց հաջորդ երեխային: Շնորհակալ եմ վստահության համար, դա ինձ համար մեծ պատիվ է: Մյուսներին նույնպես անկեղծորեն շնորհակալ եմ՝ ինձ վստահելու համար: Խոստանում եմ աշխատել ինչպես միշտ՝ լիակատար նվիրումով:

Այժմ, կբաժանեմ թերթիկներ, որոնց վրա գրված է մեր այսօրվա ծնողական ժողովի թեման, իսկ դուք կփորձեք վերծանել խառնագիրը և կարդալ այն: (Խառնագիրը վերծանելուց հետո, ուսուցիչը ժողովի թեման փակցնում է գրատախտակին «Առաջին անգամ՝ առաջին դասարան»):

Այսօրվանից մենք մեկ նավի փոքր թիմ ենք, որը կոչվում է «Դպրոց»: Մենք պետք է միասին հաղթահարենք դժվարությունները, միասին սովորենք և միասին մեծանանք: Որպես կանոն, երեխաների հետ սովորում են նաև նրանց մայրերն ու հայրերը, տատիկներն ու պապիկները, ինչպես նաև նրանց ուսուցիչը: Հուսով եմ, որ հետագա չորս տարիների ընթացքում մեր թիմը կլինի համախմբված և միասնական, քանի որ, այդպես ավելի հեշտ կլինի անցնել այս ճանապարհը: Սա է մեր առջև դրված խնդիրը: Քանի որ, մեզ բախտ է վիճակվել հանդիպել, ուրեմն այլ տարբերակ չունենք:

Դուք պետք է հասկանաք և ընդունեք այն փաստը, որ երբ ձեր երեխան ընդունվում է դպրոց, նրա կյանքում հայտնվում է ձեզանից ավելի հեղինակավոր մարդ: Դա իր ուսուցիչն է: Մի՛ զարմացեք, մի՛ վրդովեք, քանի որ դա այդպես է: Հարգե՛ք առաջին դասարանցու կարծիքը իր ուսուցչի մասին: Երբեք երեխայի ներկայությամբ մի՛ քննարկեք ուսուցչին: Բոլորս էլ հասկանում ենք, որ այդ խոսքերը միշտ չէ, որ գովեստի խոսքեր են: Ես ադամանդե զարդ չեմ, որ բոլորը հավանեն ինձ: Բայց, երեխայի ներկայությամբ իր ուսուցչի մասին խոսելիս, նրբանկատ եղեք: Մի՛ նեղացրեք ձեր երեխային:

Հիմա ձեր երեխաների մոտ ամեն ինչ կփոխվի նորովի. դասեր, ուսուցիչներ, դպրոցական ընկերներ: Շատ կարևոր է ,որպեսզի դուք ձեր երեխաների կողքին լինեք:

Ուրեմն, եկեք բոլորս միասին գնանք այս գեղեցիկ նավով, որի անունն է «Դպրոց», ճանապարհորդելու գիտելիքի անսպառ ծովով, և հիշենք, որ շատ բան կախված է ծնողներից և նրանք պետք է լինեն մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակիցներ:

«Ընտանիքն ու դպրոցը դա ծովի ափն է ու ծովը:Ափին երեխան անում է իր առաջին քայլերը,իսկ հետո նրա առջև բացվում է գիտելիքի անսահման ծովը:Եվ դեպի այդ ծովը տանող ճանապարհը հարթում է դպրոցը:Բայց դա չի նշանակում,որ երեխան պետք է ամբողջությամբ կտրվի,հեռվանա ափից»:

Լև Կասսիլ

Հրահանգներ ծնողներին

Առաջին դասարանցու ծնող լինելը այնքան էլ հեշտ չէ,ուստի թույլ տվեք ձեզ մի քանի խորհուրդ տալ.

- աշխատեք միշտ ներկա գտնվել ծնողական ժողովներին,ունենալ ձեզ հետ նոթատետր և գրիչներ
- շատ եմ խնդրում չհամեմատել ուսուցիչների աշխատանքը զուգահեռ դասարանի կամ դպրոցի ուսուցիչների աշխատանքի հետ

Եթե ցանկանում եք, որ ձեր երեխան երջանիկ դպրոցական կյանքով ապրի,ապա պետք է՝

- ավելի շատ ուշադրություն դարձնել երեխային
- սովորելու համար ստեղծել հարմարավետ միջավայր

խրախուսել նրա մեջ սովորելու և դասընկերների հետ շփվելու ցանկությունը

- Առաջին դասարանի սովորողների գիտելիքները միավորներով չեն գնահատվում, հետևաբար, փոխանակ հարցնեք «Ի՞նչ գնահատական ես ստացել», հարցրեք «Ի՞նչն էր հետաքրքիր այսօրվա դասին», «Ու՞մ հետ ես ընկերացել», «Ու՞մ հետ ես խաղացել դասամիջոցին»:
- Պետք է նկատի ունենալ, որ մանկապարտեզի դաստիարակը և դպրոցի ուսուցիչը կարող են տարբեր կերպ ընկալել նույն երեխային: Երբեմն դա սթրեսային է, փոխհարաբերությունների փոփոխությունը կարող է ցավոտ լինել: Աջակցե՛ք երեխային այս իրավիճակում, միևնույն ժամանակ եղեք կորեկտ ճիշտ ուսուցչի հետ:
- վերջին և ամենակարևորը. երբ կհամեմատեք ձեր երեխային այլ երեխաների հետ, գովաբանեք նրան ձեռքբերումների և հաջողությունների համար:

Սիրե՛լի ծնողներ,եթե դուք հետաքրքրված եք ,որ ձեր երեխան հաջողակ լինի դպրոցում,ապա առաջին հերթին օգնեք նրան ձեռք բերել և զարգացնել հետևյալ հմտությունները.

- վերցնել այն ամենը,ինչ հարկավոր կլինի դպրոցում
- տնային աշխատանքը (առկայության դեպքում) ճիշտ կատարել
- ողջունել ուսուցիչներին և երեխաներին
- պատասխանել հարցերին և ինքնուրույն ձևակերպել հարցեր
- լսել ուսուցչի բացատրությունները և կատարել առաջադրանքները
- օգնություն խնդրել, եթե ինչ- որ բան չի ստացվում
- պատշաճ ձևով արձագանքել դիտողություններին
- ընկերություն անել հասակակիցների հետ

Ուսման հաջողությունը մեծապես կախված է ընտանիքի և դպրոցի արդյունավետ համագործակցությունից:

Ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները

- հնգօրյա դպրոցական շաբաթ
- նվազագույն տնային աշխատանք
- միավորային գնահատում չկա
- դասացուցակ
- հարմարվողականության ժամկետը 3 շաբաթ կամ 1 ամիս՝ կախված դասարանից (այս օրերին երեխաները 3 դաս ունեն)
- դասասեղանների մոտ երեխաներին նստեցնելը կամ տեղափոխելը բժշկական նկատառումներով և ուսուցչի հայեցողությամբ
- անվտանգ ճանապարհ դեպի դպրոց
- նախաճաշի կազմակերպում
- այլ խմբակներ հաճախելը (ընտրել և զեկուցել ուսուցչին)

Դպրոցն ունի իր պահանջներն ու կանոնները,որոնք պետք է պահպանեն յուրաքանչյուր աշակերտ և ծնող.

- դասերը սկսվում են ժամը 9 .00 ին: Երեխաները դպրոց են գալիս 8. 40-8. 50: Ավելի շուտ գալու կարիք չկա:
- Դասից ուշանալ չի կարելի:
- Ծնողներն իրենց երեխաներին ուղեկցում են դպրոց և այնտեղ էլ դիմավորում են դասերից հետո:
- Դասերից բացակայելը թույլատրվում է միայն հիվանդության պատճառով:
- Ապահովել առաջին դասարանցուն անհրաժեշտ դպրոցական պարագաներով:

Ի՞նչ պետք է ունենա առաջին դասարանցին

Գրչատուփի մեջ

- Կապույտ գրիչ
- Հասարակ մատիտ
- Ռետին
- Քանոն
- Սրիչ
- Գունավոր մատիտներ

Թղթապանակի մեջ

- Տետր(վանդակավոր)
- Տետր(տողերով)
- Տետրի կազմ

- Գրքի կազմ
- Մատիտներ(ստուգել և սրել ամեն օր)
- Էջանիշներ՝յուրաքանչյուր դասագրքի համար
- Օրագիր(աշակերտի անուն ազգանունը գրված)

Տեխնոլոգիայի դասի համար

- Գունավոր թուղթ
- Գունավոր ստվարաթուղթ
- Պլաստիլին
- Տախտակ՝պլաստիլինի համար
- Սոսինձ
- Մկրատ՝բութ ծայրերով

Կերպարվեստի դասի համար

- Ջրաներկ
- Վրձիններ
- Նկարչական տետր(ալբոմ)

Ֆիզկուլտուրայի դասի համար

- Կիսաթև շապիկ
- Սպորտային տաբատ կամ կիսատաբատ
- Սպորտային կոշիկներ

Հաջողված ծնողական ժողովի անցկացման հնարքներ

- սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև ՝ բոլորը կարող են լավ տեսնել և լսել միմյանց
- պատրաստել այցեքարտեր ծնողների անունով, հատկապես, եթե նրանք դեռ չեն ճանաչում միմյանց
- ծնողներին դիմել իրենց անուններով, այլ ոչ թե երեխայի հայր կամ մայր անվանելով
- կիրառել «Զրույց մեկ բաժակ թեյի շուրջ» հնարը՝ հատկապես առաջին դասարանում
- կիրառել ծնողների հետ աշխատանքի խմբային ձևեր, խաղի տարրեր
- հաշվի առնել հեղինակավոր ծնողների կարծիքը, փորձը
- խստորեն սահմանելծնողական ժողովի հանդիպման օրն ու ժամը, սահմանել հանդիպման կանոնները՝ խնայելով ծնողների ժամանակը
- հանդիպումը պետք է ավարտվի կոնկրետ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծնողական ժողովի ավարտին անհրաժեշտ է ամփոփել հանդիպումը: Զրույցի ընթացքում բարձրացված հարցերի ամփոփումը կարելի է կատարել կրկրին դիմելով փոխաբերական քարտերի օգնությանը կամ ընթերցել որևէ առակ կամ մեջբերել որևէ ասույթ,աֆորիզմ: Կամ էլ, մինչ ժողովի սկսվելը, կարելի է բաժանել թղթեր, որի վրա նկարված է «Ճամպրուկ» և առաջարկել ընթացքում այն լրացնել օգտակար խորհուրդներով, նշումներով, որ կհնչեն ժողովի ընթացքում:

Ժողովի վերջում հրավիրել բոլորի ուշադրությունը իրենց լրացրած «ճամպրուկների» վրա, թե ի՞նչ օգտակար նյութերով է այն լցվել մեր ժողովի ընթացքում:

Գրեթե բոլոր ծնողական ժողովների ավարտին ծնողներին բաժանում եմ հուշող - թերթիկներ, հրահանգներ, խորհուրդներ և այլն:

Հասկանալի է, որ մեկ հոդվածի մեջ անհնար է թվարկել և նկարագրել ծնողական ժողովի արդյունավետությունը բարձրացնող բոլոր առկա մեթոդաբանական տեխնիկաները և հնարները: Վստահ եմ, որ դրանց թիվը չի սահմանափակվում միայն իմ ներկայացրածներով: Ուստի, ուսուցիչը, աշխատելով ծնողների հետ, պետք է մշտապես փնտրի նմանատիպ մեթոդներ , հնարներ՝ դրանք իր պրակտիկայում օգտագործելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Цветкова С. Вопросы воспитание в картинках // Школьный психолог. 2006 / 5

Хухлаева О, Активные формы групповой работы с родителями /Школный психолог. 2006/19

2.Источник : Нартова - Бочавер С.К,Мухортоова Е.А. Скоро в школу! Увлекательная подготовка детей к первому классу.М.Глобус. 1995

3.Источник: Лютова К.К.;Монина Г.Б. Тренинг эффективного взаимодействия с детьми. СПБ;Речь 2005.

4.https://hy.healthy-food-near-me.com/metaphorical-cards-how-do-they-work/

5.Անի Խուդոյան՝ Գիտական հոդվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1